▯ ▯ ▯ ▯ ▯ ▯ ▯ ▯

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 19.9. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ապրանքների ըստ նշանակության պիտանի լինելու վերաբերյալ համապատասխան ապրանքագիտական փորձաքննությունների, օգտագործված ապրանքների արժեքների փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների տրամադրման, հայտարարատուի ներկայացրած դիմումի հիման վրա մաքսային հայտարարագրերի լրացման, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը

~~1. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, հայտարարատուի ներկայացրած դիմումի հիման վրա մաքսային հայտարարագրերի լրացման, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված անձանցից պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.~~

~~1) Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների իրականացման (բացառությամբ ապրանքների գնման և հաշվառման) համար~~	~~բազային տուրքի 3.5-ապատիկի չափով~~
~~-~~	
~~2) ապրանքների գնման և հաշվառման համար, բացառությամբ խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների համար՝~~	-
~~-~~	
~~ա. միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված՝ մինչև մեկ տոննա քաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար~~	~~բազային տուրքի չափով~~
~~-~~	
~~բ. միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված՝ մեկ տոննայից~~	~~բազային տուրքի 0.3-~~

~~ավելի քաշ ունեցող ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի մաքսային հսկողության համար~~	~~ապատիկի չափով~~
~~3) խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով մեկ ամսվա ընթացքում միևնույն պայմանագրի հիման վրա միևնույն ուղղությամբ տեղափոխվող ապրանքաքանակի մաքսային հսկողության համար~~	~~բազային տուրքի 500 ապատիկի չափով~~
~~4) Հայաստանի Հանրապետության տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման՝ յուրաքանչյուր հարյուր կիլոմետրի համար~~	~~բազային տուրքի 10 ապատիկի չափով~~
~~5) մաքսային մարմինների կողմից ժամանակավոր պահպանության համար՝~~ ~~ա. օրական՝ մինչև մեկ տոննայի համար~~ ~~բ. մեկ տոննայից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի համար~~	~~բազային տուրքի չափով~~ ~~բազային տուրքի 0.3 ապատիկի չափով~~
~~6) տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության համար՝~~ ~~ա. մինչև 10 նստատեղով մարդատար ավտոմեքենաներ~~ ~~բ. այլ տրանսպորտային միջոցներ~~	~~բազային տուրքի 2 ապատիկի չափով~~ ~~բազային տուրքի 5 ապատիկի չափով~~
~~7) մաքսային մարմնի կողմից Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով և «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով ապրանքների դասակարգման, ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդների և ապրանքների ծագման երկրի վերաբերյալ յուրաքանչյուր նախնական որոշման համար~~	~~բազային տուրքի 30 ապատիկի չափով~~
~~8) մաքսային մարմնի կողմից «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում մի քանի~~	~~բազային տուրքի 30 ապատիկի չափով~~

~~խմբաքանակներով տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման տրամադրման համար~~	
~~9) Մաքսային հայտարարագիրը թղթային կրիչով ներկայացնելու դեպքում, եթե հայտարարատուն չի կարող ներկայացնել մաքսային հայտարարագրի էլեկտրոնային օրինակը, մաքսային մարմնի կողմից մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգում մաքսային հայտարարագրի էլեկտրոնային տեսքը ձևավորելու համար~~	~~բազային տուրքի 3.5-ապատիկի չափով~~
~~10) հայտարարատուի ներկայացրած դիմումի հիման վրա մաքսային հայտարարագրի լրացման համար~~	~~բազային տուրքի 30-ապատիկի չափով~~

1. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ապրանքների ըստ նշանակության պիտանի լինելու վերաբերյալ համապատասխան ապրանքագիտական փորձաքննությունների, օգտագործված ապրանքների արժեքների փորձաքննությունների իրականացման և եզրակացությունների տրամադրման, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածով նախատեսված անձանցից պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) մաքսային մարմնի կողմից ապրանքների ժամանակավոր պահպանության յուրաքանչյուր օրվա համար (բացառությամբ՝ սույն մասի 2-րդ կետի)՝	
ա մինչև 3 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 1 5-ապատիկի չափով
բ 3-ից ավելի՝ մինչև 10 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 3-ապատիկի չափով
գ 10-ից ավելի՝ մինչև 25 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 6-ապատիկի չափով
դ 25-ից ավելի՝ մինչև 60 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 12-ապատիկի չափով
ե. 60 տոննայից ավելի բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 25-ապատիկի չափով
2) մաքսային մարմինների կողմից հետևյալ յուրաքանչյուր ապրանքի ժամանակավոր պահպանության համար՝ սկսած ժամանակավոր պահպանության 4-րդ օրվանից՝ օրական՝	

ա. ԱՏԳ ԱԱ 8429 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
բ ԱՏԳ ԱԱ 8701 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
գ ԱՏԳ ԱԱ 8702 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 7-ապատիկի չափով
դ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
ե. ԱՏԳ ԱԱ 8704 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
զ ԱՏԳ ԱԱ 8705 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
է. ԱՏԳ ԱԱ 8709 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
ը. ԱՏԳ ԱԱ 8711 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
թ. ԱՏԳ ԱԱ 8716 ապրանքային դիրքին դասվող ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
3) մեկ տարանցման հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար՝ անկախ քաշից՝ բացառությամբ սույն մասի 4-րդ, 14-րդ և 15-րդ կետերի	բազային տուրքի 10-ապատիկի չափով
4) ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ներքին մաքսային մարմին մեկ տարանցման հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար՝ անկախ քաշից	բազային տուրքի 5-ապատիկի չափով
5) մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար՝ բացառությամբ սույն մասի 14-րդ և 15-րդ կետերի՝	
ա մինչև 3 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
բ 3-ից ավելի՝ մինչև 10 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
գ 10-ից ավելի՝ մինչև 25 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 15-ապատիկի չափով

դ 25-ից ավելի՝ մինչև 60 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ե. 60 տոննայից ավելի բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
6) մեկ ուղևորային մաքսային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար՝	
ա մինչև 3 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 3-ապատիկի չափով
բ 3-ից ավելի՝ մինչև 10 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
գ 10-ից ավելի՝ մինչև 25 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
դ 25-ից ավելի՝ մինչև 60 տոննա ներառյալ բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 1000-ապատիկի չափով
ե. 60 տոննայից ավելի բրուտտո քաշով ապրանքների համար	բազային տուրքի 5000-ապատիկի չափով
7) Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցների համար ներկայացվող՝ մեկ տրանսպորտային հայտարարագրով հայտարարագրվող կամ որպես տրանսպորտային միջոցի հայտարարագիր օգտագործվող՝ միջազգային պայմանագրերով նախատեսված փոխադրողի փաստաթղթերով տրանսպորտային միջոցների բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար՝ անկախ քաշից	բազային տուրքի 10-ապատիկի չափով
8) մաքսային մարմինների կողմից մեկ նախնական որոշման ընդունման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
9) մաքսային մարմինների կողմից մաքսային ուղեկցման համար՝ մեկ տրանսպորտային միջոցի կամ ուղեկցվող այլ միավորի համար՝ անկախ քաշից	բազային տուրքի 25-ապատիկի չափով
10) տեղորոշող սարքերով մեկ տրանսպորտային միջոցի երթուղու դիտարկման համար՝ անկախ քաշից	բազային տուրքի 5-ապատիկի չափով
11) խողովակաշարային տրանսպորտով և էլեկտրահաղորդման գծերով մեկ ամսվա ընթացքում միևնույն պայմանագրի հիման վրա միևնույն	բազային տուրքի 500-ապատիկի չափով

ուղղությամբ տեղափոխվող ապրանքների մաքսային հսկողության համար	
12) մաքսային մարմնի կողմից «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում մի քանի խմբաքանակներով տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման տրամադրման համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
13) մաքսային մարմինների կողմից ապրանքների ըստ նշանակության պիտանի լինելու վերաբերյալ համապատասխան ապրանքագիտական, ինչպես նաև օգտագործված ապրանքների արժեքների փորձաքննության իրականացման և եզրակացության տրամադրման համար՝	
ա 1 օբյեկտի համար իրավաբանական անձանց դիմումով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
բ 1 օբյեկտի համար ֆիզիկական անձանց դիմումով	բազային տուրքի 15-ապատիկի չափով
14) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով կամ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ ներմուծած ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից այդ ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն արտահանելու դեպքում արտահանվող ապրանքների համար միևնույն մաքսային հայտարարագրով հայտարարագրված մինչև մեկ տոննա բաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
15) Սույն մասի 14-րդ կետով սահմանված՝ արտահանվող ապրանքների համար միևնույն	բազային տուրքի չափով

մաքսային հայտարարագրով հայտարարագրված՝ մեկ տոննայից ավելի քաշ ունեցող ապրանքների յուրաքանչյուր լրացուցիչ (կամ ոչ լրիվ) տոննայի մաքսային հսկողության համար

2. Մաքսային մարմինների սահմանած տեղերից և աշխատանքային ժամերից դուրս ապրանքների մաքսային ձևակերպումների կամ դրանց հետ կապված առանձին գործողությունների կատարման համար պետական տուրքը գանձվում է սույն հոդվածով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով:

3. Հատուկ պահպանման պայմաններ պահանջող ապրանքների ժամանակավոր պահպանության համար պետական տուրքը գանձվում է սույն հոդվածի ~~1-ին մասի 5-րդ կետով~~1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույքաչափերի կրկնապատիկի չափով:

4 Սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված 1 օբյեկտը ներառում է տարբեր ԱՏԳ ԱԱ ծածկագրեր ունեցող կամ նույն ԱՏԳ ԱԱ ծածկագրով, սակայն տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող առավելագույնը 3 ապրանք, որոնց քանակը (պարկ, տուփ, հատ, փաթեթվածք և այլն), անկախ քաշից, չի կարող գերազանցել 30 միավորը:

Հոդված 28.2. Մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար պետական տուրքի գծով արտոնությունները

1. Սույն օրենքի 19.9-րդ հոդվածով սահմանված պետական տուրքից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքները: Օրենսդրությամբ (այդ թվում՝ միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի տարբերակումն ըստ բնույթի որակում է վարչապետի ստեղծած՝ բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովը.

2) միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները՝ այդ փոխադրումների իրականացման ժամանակ.

3) ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման կամ մաքսատուրքերի և հարկերի վճարումից ազատմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով տեղափոխվող անձնական օգտագործման ապրանքները.

4) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող՝ ԵԱՏՄ անդամ պետություններում հաշվառված թեթև մարդատար տրանսպորտային միջոցները.

5) ցուցադրման նպատակով «Ժամանակավոր արտահանում» կամ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված, ինչպես նաև դրանց ժամկետի ավարտից հետո համապատասխանաբար «Վերաներմուծում» և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգերով վերաձևակերպված՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված կամ գրանցման ենթակա մշակութային արժեքները.

6) մեկ առաքողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող (բացառությամբ արտահանվող, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ երկիր)՝ ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները.

7) ~~մեկ առաքողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով Հայաստանի Հանրապետության սահմանով արտահանվող, այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ երկիր՝ ընդհանուր մաքսային արժեքը մեկ միլիոն դրամը չգերազանցող գումարի չափով ապրանքները~~.

մեկ առաքողից մեկ ստացողին մեկ առաքման շրջանակներում Հայաստանի Հանրապետության սահմանով արտահանվող ընդհանուր մաքսային արժեքը, իսկ ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանման դեպքում՝ ընդհանուր արժեքը մեկ միլիոն դրամը չգերազանցող գումարի չափով ապրանքները #

8) «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքները:

1 1 Սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պետական տուրքից ազատվում են այն անձինք, որոնց կողմից տարանցման գործառնությունների իրականացման համար ներկայացվել է նախնական տեղեկատվություն՝ տարանցման հայտարարագրի լրացման համար անհրաժեշտ կազմով:

2. Սույն հոդվածով սահմանված արտոնություններից բացի, այլ արտոնություններ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 32. Պետական տուրքի գանձումը

Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը, եթե սույն օրենքով այլ կարգ սահմանված չէ կամ վճարողին պետական տուրքի գծով արտոնություն տրված չէ: Լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, գործունեության իրականացման թույլտվության կամ թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի

կրկնօրինակի տրման, գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման, գործունեության իրականացման թույլտվության վերաձևակերպման համար պետական տուրք սահմանված լինելու դեպքում համապատասխան ծառայության մատուցում կամ գործողության իրականացում է համարվում լիցենզիան, լիցենզիայի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված լիցենզիան, վերաձևակերպված լիցենզիան, այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, գործունեության իրականացման թույլտվության իրավունքը հավաստող փաստաթուղթը, գործունեության իրականացման թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակը, ժամկետը երկարաձգված գործունեության իրականացման թույլտվության իրավունքը հավաստող փաստաթուղթը, վերաձևակերպված գործունեության իրականացման թույլտվության իրավունքը հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան որոշումները հայտատուին պատշաճ ձևով ուղարկելը կամ հանձնելը:

Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրք սահմանված լինելու դեպքում համապատասխան ծառայության մատուցում կամ գործողության իրականացում է համարվում լիազոր մարմնի կողմից համապատասխան անձին հաշվառելը:

Մարդատար-տաքսի մեկից չորս ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա ունեցող անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները, մարդատար-տաքսի ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորսից ավելացնելու դեպքում պարտավոր են վճարել պետական տուրք՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով: Պետական տուրքը պետք է վճարվի մինչև ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորսից ավելի դառնալը: Սույն պարբերությամբ սահմանված դեպքում, անկախ պետական տուրքի վճարման ամսաթվից, լիցենզիայի համար տարեկան հերթական պետական տուրքը վճարվում է սույն օրենքի 34 հոդվածով սահմանված ժամկետում: Անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները մարդատար-տաքսի ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորսից ավելի դառնալու դեպքում հերթական տարեկան պետական տուրքը վճարում են սույն օրենքի 19 հոդվածի 15.5-րդ ենթակետի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույքաչափով:

Անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները մարդատար-տաքսի ավտոմոբիլների քանակը օրենսդրությամբ սահմանված կարգով չորս և պակաս դառնալու դեպքում տարեկան հերթական պետական տուրքը վճարում են սույն օրենքի 34 հոդվածով սահմանված ժամկետում՝ սույն օրենքի 19 հոդվածի 15.5-րդ ենթակետի առաջին պարբերությամբ սահմանված դրույքաչափով:

Պետական տուրքի հաշվարկման և գանձման նպատակով գործողությունների կատարման և ծառայությունների մատուցման պահ է ճանաչվում դրանց ավարտման պահը:

Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտային միջոցներով մեկնող ֆիզիկական անձանց ելքի դեպքում ծառայության մատուցման պահ է համարվում թռիչքի պահը:

Պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող մի քանի գործողություններ միաժամանակ կատարելու կամ ծառայություններ մատուցելու դեպքում պետական տուրքը հաշվարկվում է յուրաքանչյուրի համար առանձին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, և փոխանցվում համապատասխան բանկային հաշվին: Պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթի բնօրինակը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այլ բան սահմանված չլինելու դեպքում, պետական տուրքի տեսակի, վճարողի անվան, գումարի փոխանցման բանկային հաշվի համարի և վճարման ամսաթվի նշումով, մնում է պետական տուրք գանձող մարմնում՝ համապատասխան գործողությունների կատարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող գործերին կցված: Օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների իրականացրած գործողությունների և մատուցված ծառայությունների համար գանձված (այդ թվում՝ կանխիկ) պետական տուրքի գումարները համապատասխան գործողություններ կատարող կամ ծառայություններ մատուցող մարմինները բանկ են մուծում (բյուջե փոխանցում) համապատասխան գործողությունների կատարման, ծառայությունների մատուցման հաջորդող ամսվա առաջին երկու բանկային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը սահմանում և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնեցնում է պետական տուրքի այն տեսակները, որոնք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից կարող է իրականացվել կանխիկ: Այդ դեպքում գանձված (ստացված) պետական տուրքի գումարները համապատասխան գործողություններ կատարող կամ ծառայություններ մատուցող մարմինները (դրանց պատասխանատու պաշտոնատար անձինք) բանկ են մուծում (բյուջե փոխանցում) համապատասխան գործողությունների կատարման, ծառայությունների մատուցման հաջորդ երկու բանկային օրվա ընթացքում, բացառությամբ, երբ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով մեկնող ֆիզիկական անձանց ելքի դեպքում պետական տուրքի գանձման լիազորությունը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պատվիրակվել է կազմակերպություններին, որի դեպքում պետական տուրքի գումարները պետական բյուջե են փոխանցվում կառավարության սահմանած կարգով: Այս դեպքում Հայաստանի Հանրապետության ավիափոխադրողները և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված օտարերկրյա ավիափոխադրողների ներկայացուցչությունները ուղևորների փոխադրման տոմսի մեջ ներառված

պետական տուրքի գումարները պետական բյուջե են փոխանցում ոչ ուշ, քան փաստացի թռիչքի օրվան հաջորդող 10 բանկային օրվա ընթացքում, իսկ ոչ կանոնավոր օդային փոխադրումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչություններ չունեցող օտարերկրյա կազմակերպությունների կողմից օդային փոխադրումներ իրականացնելու դեպքում փաստացի թռիչքի օրվան հաջորդող 10 բանկային օրվա ընթացքում պետական տուրքի գումարները հաշվարկում և պետական բյուջե են փոխանցում օդանավակայանները շահագործող կազմակերպությունները՝ անկախ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններից փոխանցումների ստացումից:

Առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ պետական տուրքի գանձման լիազորությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է պատվիրակվել ձեռնարկություններին, կազմակերպություններին: Այդ դեպքում դրանց իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման նպատակով տվյալ ձեռնարկությունների, կազմակերպությունների կողմից կարող են սահմանվել վճարներ, (բացառությամբ օդային փոխադրումների տոմսերի վաճառք և օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններին պետական տուրքի գանձման լիազորությունը պատվիրակված լինելու դեպքերի)որոնց չափը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի հետ:

Օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ բաժնի 14.2.1-14.2.5-րդ կետերով սահմանված պետական տուրքի տարեկան գումարի մեկ քառորդ մասը պետական բյուջե է վճարվում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակի սկզբին նախորդող ամսվա 25-ը ներառյալ, բացառությամբ լիցենզիայի տրման համար վճարվող առաջին պետական տուրքի, որի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հետևյալ չափով՝ օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ բաժնի 14.2.1-14.2.5-րդ կետերով սահմանված պետական տուրքի տարեկան գումարի մեկ տասներկուերորդի և լիցենզիայի տրման ամսվանից մինչև տվյալ եռամսյակի վերջին ամիսն ընկած ժամանակահատվածում ներառված, այդ թվում՝ ոչ ամբողջական, ամիսների թվի արտադրյալով:

~~Սույն օրենքի 19.9-րդ հոդվածով սահմանված պետական տուրքը վճարվում է՝~~

~~ա) մաքսային ընթացակարգերի շրջանակներում, բացառությամբ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի, ինչպես նաև ժամանակավոր պահպանության համար՝ մինչև ապրանքները բաց թողնելու պահը.~~

~~բ) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի շրջանակներում՝ մինչև մաքսային տարանցման ավարտը.~~

~~գ) մաքսային ուղեկցման համար՝ մինչև մաքսային ուղեկցումը փաստացի սկսելը.~~

~~դ) նախնական որոշումների համար՝ մինչև մաքսային մարմինների կողմից նախնական որոշումների տրամադրումը.~~

~~ե) մաքսային հայտարարագրի լրացման համար՝ մինչև «Մաքսային կարգավորման մասին» օրենքով նախատեսված դիմումը ներկայացնելը:~~

Սույն օրենքի 19.9-րդ հոդվածով սահմանված պետական տուրքը վճարվում է հետևյալ ժամկետներում՝

ա սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պետական տուրքը վճարվում է մինչև պահպանության ավարտը

բ սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պետական տուրքը վճարվում է մինչև տարանցման ավարտը կամ դադարեցումը

գ սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 11-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված պետական տուրքը վճարվում է մինչև ապրանքների բացթողնման վերաբերյալ մաքսային մարմնի կողմից որոշման կայացումը

դ սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պետական տուրքը վճարվում է տրանսպորտային միջոցի բացթողումից հետո մեկ ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տրանսպորտային միջոցի դուրսբերումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից

ե. սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 12-րդ կետերով սահմանված պետական տուրքը վճարվում է մինչև նախնական և դասակարգման որոշումների կայացման համար ներկայացված դիմումների՝ մաքսային մարմնի կողմից գրանցումը

զ սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված պետական տուրքը վճարվում է մինչև մաքսային ուղեկցման մեկնարկը

է սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանված պետական տուրքը վճարվում է մինչև փոխադրման ավարտը:

ը սույն օրենքի 19 9-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված պետական տուրքը վճարվում է մինչև մաքսային մարմինների կողմից փորձաքննության արդյունքների տրամադրումը:

Սույն օրենքի 19.7-րդ, 19.8-րդ և 19.14-րդ հոդվածներով սահմանված պետական տուրքի գումարները պետական բյուջե են վճարվում այդ հոդվածներով սահմանված ժամկետներում: Ֆիզիկական անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենան այլ ֆիզիկական անձանց օտարելու դեպքում տվյալ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման ծառայության մատուցման պահ է համարվում այդ ավտոմեքենայի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման պահը: